ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1956 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՐԵՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, ինչպես բոլոր ճնշված ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի պատմության մեջ մի նոր, փառահեղ էջ բացեց։ Հերոսական պատմական անցյալ ունեցող, բազմաչարչար հայ ժողովուրդը ոգևորված Մեծ Հոկտեմբերի հաղթանակով, Կոմունիստական պարտիայի գեկավարությամբ պայքարի ելավ Սովետական իշխանության հաղթանակի համար, իր ազատ ու երջանիկ կյանքը կերտելու համար։

Մեր ժողովրդի պատմության այդ հերոսական էպոպեան է, որ առաջին անգամ մանրազնին և գիտականորեն շարադրվել է երիտասարդ գիտնական Գ. Ղարիբջանյանի աշխատության մեջ։

Աշխատությունը հիմնականում գրված է արխիվային փաստաթղթերի և ժամանակի մամուլի մեծ արժեք ներկայացնող նյութերի ուսումնասիրության հիման վրա։ Ընկ. Ղարիբջանյանը դրական դործ է կատարել, հայտնաբերելով մի շարք նոր փաստաթղթեր։

Աշխատության ներածական մասում հեղինակը համառոտակի շարադրում է կապիտալիզմի զարդացումը և բանվոր դասակարդի ձևավորումը Անդրկովկասում և Հայաստանում՝ 19-րդ դարի վերջերում և 20-րդ դարի սկզբում, նշվում է առաջին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հանդես դալը և լենինյան «Իսկրայի» դերը նոր տիպի պարտիայի ստեղծման գործում։ Հաջող է ցույց տրված Լենինի աշակերտներ և դինակիցներ Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի և մյուսների ակտիվ դործունեությունը Հայաստանում մարքսիդմի տարածման գործում։

Աշխատության առաջին գլխում՝ «Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ժամանակաշրջանում» ցույց է տրված ցարիզմի տապալումը, ժամանակավոր կառավարության ստեղծումը և նրա վարած հակաժողովրդական քաղաքականությունը, մենշևիկների դավաճանությունը և բոլշևիկների ծավալած աշխատանքը սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղվող պայքարում։

Երկարատև էմիդրացիայից Վ. Ի. Լենինի վերադարձը Ռուսաստան 1917 թ. ապրիլի 3-ին և նրա Ապրիլյան թեզիսները վիթխարի նշանակություն ունեցան պարտիայի համար, ռևոլյուցիայի համար։ Ապրիլյան թեզիսները պատմական խոշոր նշանակություն ունեցան, տալով բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից սոցիալիստական ռևոլյուցիային անցնելու հանճարեղ ծրագիրը։

Հեղինակն ընդգծում է լենինյան թեզերի տեղը պատմության մեջ, որպես մարքսիստական թեորիայի մի շարք հարցերի զարդացման նոր աստիճան։

Հաջող է նկարագրված փետրվարյան ռևոլյուցիայից հետո ստեղծված դրությունը Անդրկովկասում, կոնտրռևոլյուցիայի ուժերի համախմբումը, բոլշևիկների գործունեությունը, ռևոլյուցիոն սիտուացիայի աճը։ Մի շարք նոր փաստերի հիման վրա ցույց է տրվում ռևոլյուցիոն ուժերի պայքարը Հայաստանում, մասսաների կազմակերպման և Սովետական իշխանության համար մղվող պայքարում։

Հեղինակը՝ օգտագործելով բավական հարուստ արխիվային նյութեր և ժամանակի բոլշևիկյան մամուլը, ցույց է տալիս Հայաստանի տարբեր շրջաններում ծավալվող պայքարը ժամանակավոր կառավարության օրդաններ դեմ։

Կոնկրետ նյութերի հիման վրա մերկացվում է Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեի հակաժողովրդական գործունեությունը։

---

* Գ. Բ. Ղարիբջանյան. Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները Սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում. Երևան, 1956, 436 էջ։

Աշխատության բաղմաթիվ էջերում հետևողականորեն մերկացվում է դաշնակների նացիոնալիստական և ավանտյուրիստական քաղաքականությունը (էջ 74—76)։ Ցույց է տրվում բոլշևիկյան «Պայքար», «Սոցիալ-դեմոկրատ», «Նոր կյանք», «Բարոյի ի սոլդատ» թերթերի հսկայական դերը մասսաների կազմակերպման և դալիք ռևոլյուցիոն մարտերի համար նախապատրաստման գործում։

Հեղինակը հանդամանորեն վեր է հանում Ստ. Շահումյանի և Ա. Միկոյանի դերը, նրանց հոդվածների նշանակությունը (էջ 79), ինչպես նաև Պ. Արվելաձեի և Բ. Ղարիբջանյանի Ալեքսանդրապոլում ծավալած աշխատանքը (էջ 79), հատկապես նրանց գործունեությունը «Ռարոյի ի սոլդատ» թերթի հրատարակման գործում 1917 թ.։

Կոնկրետ փաստերով ցույց է տրվում 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո Հայաստանի մի շարք շրջաններում ու արդյունաբերական վայրերում բարձրացող ռևոլյուցիոն պայքարը (էջ 83 - 87 և ուրիշները)։ Այդ պայքարը հատկապես աչքի է ընկնում Ալավերդում, Ալեքսանդրապոլում և այլ տեղերում։

Ուշադրավ են նաև դյուղացիական ելույթներին ու կալվածատիրական հողատիրությանը նվիրված էջերը (էջ 87—91), ինչպես նաև Հայաստանի տերիտորիայում գտնվող զորամասերում հասունացող ռևոլյուցիոն շարժումների նկարագրությունը (հատկապես Սարիղամիշում, Ալեքսանդրապոլում և այլ տեղեր)։

«Հայաստանի բոլշևիկների պայքարը պարտիայի 6-րդ համագումարի որոշումների կենսագործման համար» ենթաբաժնում հեղինակը բացահայտում է բոլշևիկների ծավալած հսկայական աշխատանքը մասսաներին դինված ապստամբության նախապատրաստելու ուղղությամբ։ Հատկապես ընդգծվում է Բաքվի պրոլետարիատի առաջավոր դերը, որի 1917 թ. սեպտեմբերյան գործադուլը վերջացավ լիակատար հաղթանակով։ Բաքվի պրոլետարիատի օրինակով աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը մեծ թափ է ստանում Անդրկովկասի տարբեր շրջաններում։

Անդրկովկասում ռևոլյուցիոն շարժումների հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1917 թ. հոկտեմբերի 2—7 Թիֆլիսում Ստ. Շահումյանի ղեկավարությամբ տեղի ունեցած ՌՍԴԲՊ(բ) Կովկասի կազմակերպությունների երկրային առաջին համագումարը, որը կոնկրետ միջոցառումներ մշակեց պարտիայի 6-րդ համագումարի որոշումները կյանքում իրագործելու։

Համագումարը ավարտելուց անմիջապես հետո հոկտեմբերի 7-ին Ստ. Շահումյանը Ղ. Արվելաձեի հետ դալիս է Ալեքսանդրապոլ։ Ստ. Շահումյանը Ալեքսանդրապոլում կազմակերպչական մեծ աշխատանք է տանում։ Հատկապես կարևոր նշանակություն է ունենում հոկտեմբերի 9-ին Ստ. Շահումյանի ելույթը Ալեքսանդրապոլի դավառի դյուղացիական համագումարում։ Այդ նույն օրը Ստ. Շահումյանը, ելույթ է ունենում նաև Ալեքսանդրապոլի կայազորի երկու հազար զինվորների առաջ։ Այստեղից Ստ. Շահումյանը, իր տպավորությունները հեռագրով հաղորդելով „Рабочий путь" թերթին, գրում էր. «Բսան տասարանոց կայազորն ամբողջությամբ բոլշևիկյան է»։ Այդ աշխատանքի շնորհիվ էր, որ հոկտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլի Սովետի ղեկավարությունը անցնում է բոլշևիկների ձեռքը։

Բաղմաթիվ նոր նյութերի հիման վրա հեղինակը նկարագրում է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախօրյակին Հայաստանի շրջաններում սկսված ռևոլյուցիոն վերելքը։

Ր. Լորիրջանյանը նշելով Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմական նշանակությունը, ցույց է տալիս այն մեծ շարժումը, որ սկսվել էր Հայաստանի բաղարներում և շրջաններում, որտեղ աշխատավորները ողջունում էին սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը, ընդգծում նրա ազատարար նշանակությունը բոլոր ճնշված ժողովուրդների համար։ Այստեղ հեղինակը մեջ է բերում աշխատավորների և զինվորական մասերի ժողովների և միտինգների բանաձևերից և բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարների ելույթներից կարևոր փաստեր, որոնց մի զգալի մասը առաջին անգամն է օգտագործում և գիտականորեն հիմնավորվում։

Ընդգծվում է այն կարևոր փաստը, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո հայ աշխատավորությունը մտնում է իր պայքարի նոր փուլի մեջ՝ Սովետական իշխանության համար մղվող պայքարի փուլի մեջ։

Գրախոսվող մենագրության հաջորդ բաժինը. «Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները Անդրկովկասում հակասովետական բլոկի և օտարերկրյա ինտերվենտների

դեմ մղված պայքարում» — հանգամանորեն նկարագրում է Անդրկովկասի աշխատավորության վճռական պայքարը Սովետական իշխանության հաղթանակի համար և կոնտրռևոլյուցիոն ուժերի միավորումն ու կատաղի պայքարը ռևոլյուցիայի դեմ։ Բավական հաջող է դուրս տված Ստ. Շահումյանի դերը որպես Կովկասի գործերի արտակարգ կոմիսարի և նրա վճռական պայքարը ռևոլյուցիայի թշնամիների դեմ, Լենինի դիրեկտիվները անշեղորեն իրագործելու խնդրում։

Ռուսաստանի Սովետական կառավարության որոշումը 1917 թ. դեկտեմբերին Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին կից Հայկական Գործերի Կոմիսարիատ ստեղծելը, նույն ամսի 29-ին «Դեկրետ «Թյուրքահայաստանի» մասին» կարևոր փաստաթղթի հրապարակումը ռևոլյուցիոն նոր վերելք ստեղծեց հայ աշխատավորության մեջ Սովետական իշխանության համար մղած նրա պայքարում։

Կարևորն այն է, որ Հայաստանի բոլշևիկների Սովետական իշխանության համար մղած պայքարը տրվում է Ռուսաստանում տեղի ունեցող դեպքերի և անդրկովկասյան ժողովուրդների մղած քաղաքական պայքարի հետ կապակցված։

Աշխատության երրորդ գլուխը «Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները դաշնակների և նրանց իմպերիալիստական տերերի դեմ մղված պայքարի կազմակերպիչներ 1918—1919 թվականներին» մերկացնում է օտարերկրյա իմպերիալիստների գավթողական պլանները Անդրկովկասում, հատկապես Բաքվում, որտեղ նացիոնալիստական պարտիաները կատարում էին բացարձակորեն հայրենիքի նկատմամբ իրենց դավաճանական դերը։

Հեղինակը մեջ է բերում բազմաթիվ թվական տվյալներ, որոնք ցայտուն կերպով ցույց են տալիս Հայաստանի տնտեսական անկումն ու քայքայումը (էջ 240—244) դաշնակների արյունոտ տիրակալության շրջանում։

Այս բաժնում բավական հաջող է տրված Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին կից Հայկական Գործերի Կոմիսարիատի ծավալած ագիտացիոն-մասսայական աշխատանքները Ռուսաստանի հայաբնակ շրջաններում (էջ 248—255 և ուրիշները)։

1918—1920 թթ. Հայկական Կոմիսարիատի հրատարակությամբ լույս են տեսել 80 անուն գիրք 422 հազար տիրաժով (էջ 249)։

1918 թ. հունիսի 22-ից լույս է տեսնում Հայկական Գործերի Կոմիսարիատի օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթը, որը հայաբնակ վայրերում մեծ չափով մասսայականացնում էր Վ. Ի. Լենինի գաղափարները, Սովետական իշխանության դեկրետներն ու որոշումները։ Այդ թերթի էջերում Վ. Տերյանը կոչ էր անում հայ աշխատավորներին պաշտպանել Ռուսաստանի Սովետական իշխանությունը, քանի որ հայ աշխատավոր ժողովրդի փրկությունը այդ իշխանության մեջ է (տես «Կոմունիստ», № 1, 1918 թ.)։

1919 թ. մայիսից Մոսկվայում լույս է տեսնում «Կարմիր դրոշակ» հայերեն թերթը։ Բացի այդ Ռուսաստանի մի շարք հայաբնակ վայրերում ևս լույս են տեսնում հայկական թերթեր։ Այսպես, օրինակ, Պյատիգորսկում՝ «Կարմիր օրեր», Արմավիրում՝ «Բանվորի ձայն», Աստրախանում՝ «Կարմիր բանվոր», Կրասնոդարում՝ «Կարմիր աստղ», Դոնի-Ռոստովում՝ «Բանվորի կռիվը» թերթերը, որոնք վիթխարի դեր կատարեցին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթական երթը երկրի ծայրամասերում առաջ տանելու գործում։

Հեղինակը հանգամանորեն ցույց է տվել բոլշևիկյան կազմակերպությունների ծավալած աշխատանքը 1919 թ. Երևանում, Ալեքսանդրապոլում, Զանգեզուրում, Նոր Բայազետում, Ջալալ-օղլում, Շամշադինում, Սարիղամիշում և Հայաստանի այլ վայրերում։ Կարևորն այն է, որ այստեղ հեղինակը ցուցաբերելով սովետական գիտնականներին հատուկ խիզախություն, առաջ է քաշում մի շարք կարևոր հարցեր, որոնք նախկինում անտեսվում էին։ Նա համարձակ կերպով հիշատակում է բազմաթիվ դեկավար և շարքային բոլշևիկների անունները, որոնք մինչև այժմ կամ մեղադրվում էին կամ թե լավագույն դեպքում նրանց մասին լռում էին, անտեսելով իրենց արյան գնով սովետական ազատ կյանք ստեղծող մարդկանց կատարած բարի գործերը։ Լավ է ընդգծված աննկուն ռևոլյուցիոն գործիչ և տաղանդավոր պրոպագանդիստ Ա. Մռավյանի դերը, որ լայն կազմակերպչական և ռևոլյուցիոն աշխատանք է տարել Նոր Բայազետում, Աշտարակում և Հայաստանի բազմաթիվ վայրերում։ Մեծ հետաքրքրությամբ են կարդացվում երիտասարդության կոմունիստական շարժմանը նվիրված էջերը և հատկապես «Սպարտակ» կազմակերպության

գործունեության լուսաբանումը։ Շատ գնահատելի է, որ հեղինակը բավարարվելով ընդգծել է Ղ. Ղուկասյանի, Ա. Խանջյանի, Ա. Բուդաղյանի անձնվեր ռևոլյուցիոն գործունեությունը և հայրենիքի առաջ նրանց կատարած մեծ ծառայությունները։

Աշխատության 4-րդ գլուխը, որը կրում է «Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները 1920 թվականի Մայիսյան ապստամբության կազմակերպիչներ և ղեկավարներ», վերնագիրը, հանգամանորեն վեր է հանվում բոլշևիկյան կազմակերպությունների ծավալած աշխատանքը Մայիսյան ապստամբության նախօրյակին, ընդգծվում է հատկապես Ա. Միկոյանի դերը, որն այդ ժամանակ գլխավորում և ուղղություն էր տալիս Բաքվի և Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների աշխատանքներին։

Գ. Ղարիբջանյանը մանրակրկիտ աշխատանք է կատարել ցույց տալով պարտիական կազմակերպությունների հսկայական ակտիվությունն ու աճը Հայաստանի շրջաններում (էջ 336—347 և ուրիշները)։ Պետք է ընդգծել, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կազմակերպող և ղեկավարող դերը ցույց տալու ուղղությամբ մեր գրականության մեջ դեռևս նման մանրազնին աշխատանք չի կատարվել։ «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» (էջ 347—390) ենթարաժինը ևս կարդացվում է մեծ հետաքրքրությամբ։

Աշխատության վերջին 5-րդ բաժինը «Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում։ Կոմունիստական պարտիան հայ ժողովրդի ազատարար» վերնագիրն է կրում, որը գրված է ընդհանուր հանրահայտ նյութերի հիման վրա։ Սակայն այստեղ էլ հեղինակը օգտագործել է բավական նոր նյութեր։ Այստեղ հետաքրքրականն այն է, որ ընկ. Ղարիբջանյանը կատարել է որոշ ընդհանրացումներ, ընդգծելով կոմունիստական պարտիայի և նրա մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի կազմակերպող և ղեկավարող դերը։

Աշխատության յուրաքանչյուր գլուխ ավարտվում է համառոտ եզրակացություններով, իսկ վերջաբանում տրվում են ամբողջական ընդհանրացումներ, ընդգծելով, որ «Սովետական Հայաստանը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ծնունդն է, նրա դավակը։ Միայն Մեծ Հոկտեմբերը, հանճարեղ Լենինի ստեղծած կոմունիստական պարտիայի իմաստուն քաղաքականությունը հնարավոր դարձրին հայ ժողովրդի բազմադարյան ազատագրական պայքարի հաղթանակը» (էջ 485)։

Աշխատության մեջ տեղ են գտել որոշ թերություններ։ Նման խոշոր աշխատության մեջ անհրաժեշտ էր, որ հեղինակը կանգ առներ թեմային վերաբերվող գրականության տեսության վրա, ցույց տար այն աշխատանքը, որ կատարել են սովետական պատմաբանները և այն ինչ լույս է տեսել արտասահմանում, քաղաքական տարբեր ուղղություն ունեցող պարբերական մամուլում և առանձին մոնոգրաֆիաներով։ Պետք է նշել, որ արտասահմանում լույս են տեսել մի շարք ծավալուն աշխատություններ, որոնք անմիջապես առնչվում են ներկա մոնոգրաֆիայում առաջ քաշված հարցերի հետ։ Այդ աշխատություններում մեծ քանակությամբ փաստական նյութեր են բերվում, բայց և այնպես գրանց մեջ Հայաստանում Սովետական իշխանության համար մղվող պայքարի պատմությունը ցույց է տրվում ծուռ հայելու մեջ, իսկ մի շարք խնդիրներ ուղղակի ֆալսիֆիկացիայի են ենթարկված։ Այդպիսին են Ս. Վրացյանի և մյուսների աշխատությունները։ Այդ մասին գրախոսվող աշխատության մեջ, հեղինակը պետք է, որ իր խոսքն ասեր։

Աշխատության մի շարք էջերում հեղինակը հարևանցիորեն, որոշ դեպքերում էլ տողատակ (էջ 293), ծանոթության կարգով նշում է, որ այս կամ այն հարցում գրականության մեջ գոյություն է ունեցել ոչ ճիշտ մեկնաբանում, բայց կոնկրետ կերպով չի քննարկում այն աշխատությունները, որտեղ տեղ են գտել այդ սխալները։

Առհասարակ նկատվում է այն տենդենցը, որ շատ հարցերում հեղինակը հարուստ փաստերով լուսաբանելով այս կամ այն պատմական իրողությունը, քննական մոտեցում չի ցուցաբերում դեպի գրականության մեջ գոյություն ունեցող սխալ տեսակետները ու հակասական դրույթները։ Դրա հետ մեկտեղ հեղինակն անտեսում է և արժանի գնահատականն չի տալիս մի շարք գիտնականների կատարած գրական աշխատանքին՝ սկսած քսանական թվականներից մինչև մեր օրերը։

Մեր կարծիքով Մայիսյան ապստամբության վերաբերվող ենթարաժինը կարիք ունի մի շարք հարցերում ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրության։

Այստեղ, հատկապես Մայիսյան ապստամբության պարտության պատճառները պատշաճ խորությամբ չեն լուսաբանված։ Հեղինակը կանգ չի առնում այդ հարցի վերաբերյալ գրականության մեջ գոյություն ունեցող հակասական դրույթների վրա։ Հեղինակը ինքն էլ հարցի լուսաբանումը լայն առումով չի դնում։ Պետք է հաշվի առնել այն ժամանակվա Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և միջազգային պայմանները։ Միայն ստեղծված բարդ իրադրության մանրադնին ուսումնասիրությունը հնարավորություն կտա ճիշտ հետևությունների հանգելու։ Ամեն ինչ բացատրել հիմնականում, այն ժամանակվա դեկավարների «անվճռականությամբ և անթույլատրելի բարեհոգությամբ» (էջ 377), հաշվի չառնելով ստեղծված բարդ և կրիտիկական իրադրությունը, ճիշտ չէ։

Բանն այն է, որ որոշ հեղինակներ, ներկա դեպքում նաև գրախոսվող աշխատության հեղինակը, մեջ է բերում Վ. Ի. Լենինի ապստամբությունը որպես «արվեստ» հասկանալու հինգ կետից բաղկացած դրույթները (էջ 378) և պահանջում, որ բոլոր տեղերն էլ ապստամբությունները հարմարվեն այդ կետերին, որը իհարկե անհնարին բան է։

Կ. Մարքսի ասույթներից բխող լենինյան դրույթները հանճարեղ ուղեցույցներ են, որոնք պետք է ամեն մի կոնկրետ դեպքում կիրառվեն յուրահատուկ ձևով, ժամանակի և ստեղծված պատմական իրադրության համապատասխան։

Հայաստանում ստեղծված այդ պատմական դեպքերի ընորոշումը շատ դիպուկ և օբյեկտիվ կերպով տվել է Ալեքսանդր Մյասնիկյանը 1921 թ. մայիսի 10-ին, Մայիսյան ապստամբության առաջին տարեդարձին։

«Խորհրդային իշխանության սկիզբը անցյալ տարվա Մայիսյան ապստամբությունն է, ասել է Մյասնիկյանը։ Դեռ այն ժամանակ կարող էինք ասել, որ Խորհրդային իշխանության հաղթանակը ապահովված է քանի կա աշխատավորություն, որի վրա Խորհրդային իշխանությունը կարող էր հենվել երկու ոտքով։

Այսօր մենք ծունկ չոքենք Ալեքսանդրապոլի հերոսների առաջ, նրանք արին այնինչ որ պիտի անեին։ Դասեր պիտի առնենք Ալեքսանդրապոլի ապստամբությունից։ Ամենագլխավոր դասը դա այն գիտակցությունն է, որ Հայաստանի աշխատավորության համար չկա փրկություն առանց Խորհրդային իշխանության» («Կոմունիստ», № 82, 1921, մայիսի 13 ին)։

Ռուսաստանի ռևոլյուցիոն խոշոր կենտրոնների մարտերում կոփված, քաղաքական պայքարի խոշոր ասպետ ու տեսարանը՝ Ա. Մյասնիկյանը, միանգամայն հավասարակշռված և ճշմարտացի գնահատական է տալիս մեր ժողովրդի հերոսական պայքարի այդ փառահեղ էջին։ Ալեքսանդր Մյասնիկյանը, որի համար դեպքերի էությունը պարզ էր, փաստերը թարմ, ճշմարտությունը ակնհայտ-ռևոլյուցիայի համար իրենց կյանքը զոհող հերոսներին, օպորտունիզմի և դավաճանության մեջ չի մեղադրում, ինչպես արվեց հետագա տարիներին։ Մինչև այժմ մեր ռևոլյուցիոն գործիչների գնահատման գործում գոյություն ունեցող նիհիլիստական և ոչ օբյեկտիվ դիծը պետք է մերժվի։ Այդ ուղղությամբ գրախոսվող աշխատությունը առաջին խոշոր քայլն է անում և չափազանց դրական գործ է կատարում։ Սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ հեղինակը կարողացել է լիովին հաղթահարել տարիներ առաջ ստեղծված «տրադիցիան»։

Աշխատության տարբեր էջերում խոսելով քաղաքական պարտիաների գնահատման մասին, հեղինակը չի ցուցաբերում դիֆերենցիալ մոտեցում։ Հատկապես հնչակյաններին դաշնակների շարքում դասելը ճիշտ չէ (էջ 23, 25—26, 36, 63 և այլն)։

Աշխատության մեջ տեղ են գտել աղբյուրների և արխիվային նյութերի մեջբերումների և գիտական ապարատի որոշ խախտումներ։ Այսպես, աշխատության 17-րդ էջում Ս. Շահումյանն աշխատության (Հոդվածներ և ճառեր, 1953 թ.) 61, 62 և 63 էջերից վերցրած հատվածները մեծ հապաղումներով տրվում է մի ցիտատի մեջ։ Կամ թե հաճախ այս կամ այն արխիվից մեջբերելով կարևոր փաստաթուղթ, նշվում է միայն արխիվի անունը (էջ 26, 231, 251), կամ լավագույն դեպքում ցույց է տրվում ֆոնդի համարը, առանց գործի համարը և թերթը նշելու (353, 373, 375, 377, 383 և ուրիշները)։ Աշխատության մեջ տեղ են գտել նաև մի շարք վրիպակներ ու աննշան թերություններ։

Մեր նշած այս մի քանի դիտողությունները հիմնականում վերաբերվում են մասնակի խնդիրների պարզաբանմանը։

Աշխատության մեջ առաջ քաշված հիմնական խնդիրները լուծված են դիտական բարեխղճությամբ և իդեական բարձր մակարդակով։

Ընկ. Լարիրջանյանի մենագրությունը դիտական լուրջ գործ է, որտեղ հեղինակը կարողացել է բաղմակողմանիորեն ցույց տալ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ծավալած աշխատանքը սովետական կարգերի համար մղվող հերոսական պայքարում։ Այդ պայքարը ցույց է տրված Ռուսաստանի և Անդրկովկասի պատմության կարևոր հարցերի լուսաբանման լայն ֆոնի վրա։

Ընկ. Գ. Ղարիբջանյանի մենագրությունը ներդրում է հայ ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի պատմության մեջ։

Ծ. ԱՂԱՑԱՆ